

# Ինչպե՞ս պահել քեզ սեղանի մոտ

Մի քանի խորհուրդ սեղանի մոտ ճիշտ պահվածքի համար.



- Արմուկները սեղանին մի՛ դիր: Սեղանի վրա պետք է լինեն միայն դաստակները:
- Սնունդն ու աղցանը ընդհանուր ամանից քո ափսե տեղափոխիր ոչ թե քո անձնական գդալ-պատառաքաղով, այլ այն գդալներով, որոնք դրված են ընդհանուր ամանի մեջ:
- Գդալը կամ պատառաքաղը մոտեցրու փոքր-ինչ կռացած գլխիդ, բայց երբեք մի՛ «պառկիր» ափսեի վրա:
- Սնունդը անպայման ծամիր փակ բերանով՝ ոչ դանդաղ, ոչ արագ: Լիքը բերանով մի՛ խոսիր:
- Ափսեի մեջ դիր այնքան սնունդ, որն ամբողջությամբ կուտես:
- Երբ ուտելու գործընթացը կվերջացնես, դանակն ու պատառաքաղը դիր ափսեիդ մեջ աջ կողմում՝ իրար գուգահեռ:

Այժմ փոքրիկ խնդիր սեղանը դասավորելու վերաբերյալ:

Տրված են՝ մոմլաթ, սփռոց, անձեռոցիկներ, ափսեներ՝ խորը և տափակ, բաժակներ, գավաթներ, պատառաքաղներ, դանակներ, գդալներ (ճաշի, դեսերտի և թեյի), ծաղիկներ և ծաղկաման:

Անհրաժեշտ է ամենը սեղանին դասավորել այնպես, որ ստացվի գեղեցիկ, հարմար ու ճիշտ:

1. Սեղանի մակերեսին փռել մոմլաթը, այնուհետև սփռոցը:

2. Մտովի սեղանի եզրից 2-3 սմ հեռավորության վրա ուղիղ գիծ տար ու նրա վրա դասավորիր փսեթերները՝ յուրաքանչյուրը աթոռի դիմաց: Եթե ճաշի սեղան է պատրաստվում, ապա տափակ փսեթի վրա պետք է դնել խորը փսեթ:

3. Դանակները տեղադրվում են փսեթի աջ կողմում այնպես, որ նրանց սայրը ուղղված լինի դեպի փսեթ, իսկ պատառաքաղները՝ ձախ կողմում, ծայրերով դեպի վեր: Ճաշի և դեսերտի գդալները տեղադրվում են փսեթի հետևում՝ սեղանի եզրին զուգահեռ, այնպես, որ գդալի պոչերը լինեն աջ կողմում:

4. Ջրի կամ հյուսթի բաժակները տեղադրվում են փսեթների աջ կողմում: Անձեռոցիկները՝ փսեթների վրա: Իսկ ծաղիկները կգարդարեն սեղանը: